

ԿՈՄԻՏԱՍ

ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Հայ ժողովրդի կյանքում XIX դարի երկրորդ կեսը և XX դարի սկիզբը մի շրջան էր, երբ հեղաբեկվեց հանրային կյանքը, տեղի ունեցավ անցում դեպի նոր հասարակարգ, ծավալվեցին ազգային-ազատագրական շարժումներ, զարգացման նոր փուլ թևակոխեցին հայ գրականության և արվեստի տարբեր տեսակները, հատկապես՝ թատրոնը, երաժշտությունն ու նկարչությունը։ Մեր նշանավոր գրողներից, քաղաքական-հեղափոխական գործիչներից ու հրապարակախոսներից բացի, այս շրջանը մեղ տվեց Ադամյան, Չմշկյան ու Սիրանույշ, Այվազովսկի, Սուրենյանց ու Բաշինջաղյան, Չուխաջյան, Կարա-Մուրզա ու Սպենդիարյան, Պապայան ու Շահմուրադյան, Սինանյաններ ու Ղորղանյաններ—գեղարվեստական մտավորականության մի պատկառելի ջոկատ, որն իր ուսերի վրա տարավ հայ արվեստի զարգացման ամբողջ ծանրությունը։

Սակայն հայ երաժշտության երկնակամարում առանձին փայլով հանդես եկավ մեծ Կոմիտասը, որի ստեղծագործությունն ու ամբողջ գործունեությունը նշանավորեցին նոր դարագլուխ հայ ժողովրդի երաժշտական մշակույթի բազմադարյան պատմության մեջ։ Նրա նախորդները շոշափելի գործ էին կատարել հայկական երաժշտության զարգացման նոր շրջանի համար ուղի հարթելու տեսակետից, զգացել ոուս և համաշխարհային դասական երաժշտության հարուստ փորձը հայկական իրականություն փոխադրելու անհրաժեշտությունը։ Նրանք ուշադրություն դարձրին հայ ժողովրդական, հոգևոր և գուսանա-աշուղական երաժշտության վրա և փորձեցին իրենց ստեղծագործության մեջ օգտագործել ու քաղաքացիական իրավունք նվաճել դրանց համար։ Վերջապես ճիշտ գնահատելով պատմական ժամանակաշրջանի առաջադրած խնդիրները, սկիզբ դրեցին միաձայնությունից դեպի բազմաձայնություն անցնելու բեկմանը, մի բան, որ բացառիկ նշանակություն ունեցավ հայ երաժշտության զարգացման հետագա ընթացքի համար։

Այնուամենայնիվ, դրանցից ոչ մեկին վիճակված չէր այնքան բախտորոշ դեր կատարելու մեր ժողովրդի կյանքում, որքան Կոմիտասին, որովհետև նա էր, որ դտավ ու հիմնավորեց մեր երաժշտության ազգային ոճը։ Այդ խնդրի իրագործմանն էր ծառայում նրա, որպես ստեղծագործողի, երաժիշտ-ազգագրագետի, երաժիշտ-տեսաբանի ու երգիչ-կատարողի բովանդակ գործունեությունը։

Իր բարձրագույն երաժշտական կրթությունը Բեռլինում եգրափակելուց դեռ շատ առաջ նա արդեն ձեռնարկել էր այդ դժվարին խնդրի լուծմանը։ Եթե նա այցելում էր հայկական շրջաններն ու գյուղերը և կամ էջմիածին ուխտագնացության եկած խմբերին ու ձայնագրում էր լսած երգերն ու պարեղանակ-

ները, եթե նա էջմիածնի մատենադարանում որոնումներ էր կատարում հայ երաժշտության պատմական անցյալի և կամ խազերի վերաբերյալ, ապա դրանով իսկ նա նախապատրաստվում էր այդ կնճռոտ խնդրի լուծմանը։ Բեռլինյան ուսումնառության տարիները (1896—1899) կարևոր դեր խաղացին նրա կյանքում։ Որպես հիմնադիր-անդամ Կոմիտասը մասնակցել է Միջազգային երաժշտական ընկերության բեռլինյան կոնգրեսին (1899 թ. մայիս-հունիս), հանդես եկել հայ ժողովրդական ու հոգևոր երաժշտությանը նվիրված դասախոսություններով, որոնք որպես հայտնություն հնչեցին երաժշտական աշխարհում։

Կոմիտասի հետապնդած նպատակն էր ցույց տալ ամբողջ աշխարհին, որ գոյություն ունի հայկական երաժշտական հարուստ մշակույթ, որն ունի իր ազգային ինքնատիպ դեմքը։ Եվ եթե աշխարհը դեռ չգիտի այդ երաժշտության մասին, ապա դա զուտ անբարենպաստ հանգամանքների արդյունք է։ Որպեսզի ավելի ցայտուն երևա հայկական երաժշտության յուրահատուկ ոճն ու ոգին, հայ ժողովրդական և հոգևոր երաժշտությունը նա բաղդատում էր քրդական, թուրքական, պարսկական ու արաբական երգերի հետ։

Համեմատական երաժշտագիտությունն այնուհետև դարձավ նրա ստեղծագործության հիմնական մեթոդը։ Կոմիտասը վեր էր հանում սեփական ազգայինը, ձայնագրած ու մշակած երգերն անսխալ կերպով զտում օտարամուտ տարրերից և տալիս իսկական հայկական ազգային ոճի ստեղծագործություններ։ Իր ողջ գործունեության ընթացքում նա շարունակում էր հետազոտությունները հայ երաժշտական ազգագրության բնագավառում։ Նա շրջեց հայաբնակ գյուղերն ու ավանները, ձայնագրեց մի քանի հազար ժողովրդական երգ։

Կոմիտասի ուսումնասիրությունների գլխավոր առանցքը ժողովրդական երգն էր։ Վերջինի հիման վրա էր, որ նա գտավ ու գիտականորեն հիմնավորեց հայ երաժշտության բնորոշ առանձնահատկությունները, նրա տեսական հիմունքները։ Նա էր առաջինը, որ բացահայտեց հայ երաժշտության լադերի տետրախորդային շղթայաձև կառուցվածքը, տվեց դրանց ձայնաշարերի յուրահատկությունները, ընդգծեց այն տարբերությունները, որ գոյություն ունեն մեր երաժշտության լադերի և մաժորա-մինորային ընդհանրացած սիստեմի միջև։

Կոմիտասի երաժշտագիտական հետազոտությունները հիմք հանդիսացան նրա ստեղծագործական որոնումների համար, որոնումներ, որոնք հանգեցրին հարմոնիայի ու պոլիֆոնիայի հարուստ հնարավորությունների նորովի օգտագործմանը։ Եվրոպական երաժշտության հարուստ վարձի մեքենայական կիրառման փոխարեն նա ընթացավ հայ երաժշտության առանձնահատկություններին համապատասխանող հարմոնիկ և պոլիֆոնիկ նոր արտահայտչամիջոցների հայտաբերման և օգտագործման ճանապարհով։ Դրանով պիտի բացատրել Կոմիտասի ստեղծագործությունների ոճական մաքրությունն ու թարմ հնչողությունը, որն այնպես դրավիչ է ինչպես հարազատ ժողովրդի, նույնպես և օտարազգիների համար։

Համոզվելու համար բավական է ծանոթանալ այն գնահատականներին, որոնք երևացին եվրոպական մամուլում 1899, 1906—1907 և 1914 թվականներին՝ Կոմիտասի կարդացած դասախոսությունների և տված համերգների կապակցությամբ։

Այնքան ուժեղ էր Կոմիտասի ստեղծագործությունների թողած ազդեցությունը, որ երեսուն տարի անց, 1935 թվականին, երբ Հայպետհրատը դիմեց Ռոմեն Ռոլանին՝ խնդրելով նրա թույլտվությունը «Ժան Քրիստոֆը» հայերեն թարգմանելու համար, նա առանձին ջերմությամբ արձագանքեց այդ խնդրանքին, ընդգծելով, որ հայկական երկիրն «...առանձնապես սիրելի է երաժշտի իմ սրտին՝ իր դեղեցիկ երգերով, որոնցով վաղուց հիացած եմ։ Նրանք հրապույր ու մելոդիկ մի հարստություն ունեն, որոնք ձեր երկիրը, երաժշտության տեսակետից, դարձնում են խորհրդային մի Իտալիա»[1]։

Իսկ ավելի վաղ, 1906 թ. գրած մի նամակում ասել է.

«...Հայը խորն է, ողբերգական և առնական նույնիսկ իր երաղկոտության մեջ...։ Այդ ի՞նչ հրաշալի երաժշտություն է... ես համոզված եմ, որ եվրոպական արվեստը վաղ թե ուշ անպայման կկրի այդ արվեստի ազդեցությունը, արվեստ, որին Ասիան որպես համբավաբերի առաջ է ուղարկել, որպեսզի հետո էլ ինքը ներկայանա մեզ։ Այդ արվեստն արդեն սկսում է ոգեշնչել մեր երաժիշտներին»[2]։

Կոմիտասի ստեղծագործությունը նոր խոսք էր համաշխարհային երաժշտական մշակույթի մեջ և լիովին համապատասխանում էր ժամանակաշրջանի առաջավոր շահախնդրություններին։ XIX դարի վերջերին և հատկապես XX դարասկզբում եվրոպական երաժշտության մեջ ակնհայտորեն նկատվում էին մաժորա-մինորային սիստեմից հետզհետե հեռանալու և միջնադարյան լադերի օգտագործմանն ավելի հաճախ դիմելու, ժողովրդական երաժշտության մեղեդիական և ռիթմա-ինտոնացիոն հարստություններն ըստ ամենայնի օգտագործելու տենդենցները, որոնք առանձնապես ցայտուն կերպով ի հայտ եկան Կլոդ Դեբյուսիի, Բելա Բարտոկի, Ստրավինսկու և այլոց ստեղծագործություններում։ Համաշխարհային երաժշտական մշակույթի այս նշանավոր ներկայացուցիչների շարքում Կոմիտասն առաջինն էր, որ իր ամբողջ ստեղծագործությունը հիմնեց հայ ժողովրդական երաժշտության վրա, լայնորեն օգտագործեց այդ երաժշտության լադային հիմքը, իր ետևից բերելով հարմոնիկ նոր մտածողություն, ակորդիկայի թարմացում (հրաժարումն ակորդների անպայման տերցիային կառուցվածքից, կվարտո-կվինտային ակորդների լայն օգտագործում, ֆունկցիոնալ հարմոնիկ տրիադայի՝ սուբդոմինանտայի, դոմինանտայի և տոնիկայի պարտադիր հաջորդականության խախտում և այլն), պոլիֆոնիայի սրտահայուչական հնարավորությունների նորովի օգտագործում։

Կոմիտասի ստեղծագործական որոնումներն ինքնանպատակ չէին, այլ բխում էին հայ ժողովրդական (հատկապես գեղջկական) երաժշտության առանձնահատկություններից, որոնք այնքան պարզորոշ բացահայտված էին նրա երաժշտական-տեսական հետազոտություններում։ Կոմիտաս-ազգագրագետը և երաժիշտ-տեսաբանը ձեռք-ձեռքի տված Կոմիտաս-ստեղծագործողի հետ, վիթխարի համագործակցության ճանապարհով հանգեցին հայ նոր երաժշտության ազգային ոճի ձևավորմանը, մի հանգամանք, որը բախտորոշ նշանակություն ունեցավ հայկական երաժշտական ստեղծագործության հետագա զարգացման համար։ Կոմիտասն այդ բանին հասավ արևմտահայ և արևելահայ ժողովրդական երաժշտության համադրման, նրանց սինթեզի միջո-

1 Ռոմեն Ռոլան, Ժան Քրիստոֆ, հատ. 1, Հայպետհրատ, Երևան, 1935։

2 «Иностранная литература», Մոսկվա, 1967, № 3, էջ 223։

ցով։ Իրավացի էր պրոֆ. Թ. Ա. Հարտմանը, երբ հայտարարում էր. «Հայ ժողովրդի երգը հանձինս Կոմիտասի գտել է իր ամենացայտուն վարպետին։ Եվ հայ երաժշտության զարգացմանը նախանձախնդիր ամեն ոք նախ պետք է լիովին ուսումնասիրի և հասկանա Կոմիտասին և ապա միայն սկսի ստեղծագործել»[3]։

Կոմիտասը այդ պատվին արժանացավ շնորհիվ այն բանի, որ իր գործունեության բազմակողմանիությամբ ընդգրկեց հայ երաժշտական ստեղծագործության, երաժշտագիտության, երաժշտական-ազգագրության ու կատարողական արվեստի բոլոր բնագավառները և հանդես եկավ որպես հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի դրոշակակիր։ Նրա ամուր ձեռքերում էր ստնվում հայկական երաժշտության զարգացման բանալին։ Նրան էր վիճակված ամենադժվարին ու անբարենպաստ պայմաններում մշակել ազգային ոճ և ստեղծել երաժշտական այնպիսի գլուխ-գործոցներ, որոնք այսօր էլ զարմանք են հարուցում ինչպես Հայրենիքում, նույնպես և արտասահմանում։ Նրան էր վիճակված կորստից փրկել ժողովրդի հիշողության մեջ մնացած երաժշտական գոհարները, հիմք գնել հայկական երաժշտական ազգագրությանը, ձայնագրել մի քանի հազար ժողովրդական երգ և ստեղծել այնպիսի հավաքածու, որը ոչ միայն սնեց իր ստեղծագործությունը, այլև դարձավ վճիտ ու սառնորակ աղբյուր, որից հաճույքով խմեցին և շարունակում են խմել բազմաթիվ հայ կոմպոզիտորներ։

Դժբախտաբար, Կոմիտասի երաժշտական ժառանգությունը միայն հիմա է դառնում լայն հասարակայնության սեփականություն։ Իր անբուժելի հիվանդության տարիներին նրա թերթիկները ցրիվ են եկել աշխարհով մեկ, շատ բան անդարձ կորել է, բայց որոշ մասը հայտնաբերվում ու կենտրոնանում են Կոմիտասի երևանյան արխիվում և առաջին անգամ լույս սեսնում նրա երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական առաջին հրատարակության համապատասխան հատորներում։ Այդ հրատարակության ամբողջանալուց հետո միայն (առայժմ լույս է տեսել միայն երկու հատոր և տպագրության ընթացքում է երրորդը), մեր հասարակությունը կկարողանա ավելի պարզ պատկերացում կազմել Կոմիտասի ստեղծագործական աշխատանքի ծավալի մասին։ Նա շնորհիվ իր արտակարգ աշխատասիրության, անսպառ եռանդի ու հետևողականության կարողացավ ոչ միայն ստեղծել հայ երաժշտության անկրկնելի գոհարներ, այլև դրանք դուրս բերել համաշխարհային ասպարեզ և ճանաչելի դարձնել աշխարհին։ Սրա համար հայ ժողովուրդը մշտապես երախտապարտ կմնա իր հանճարեղ զավակին։

---

3 «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1935, № 1—2, էջ 75—79։